ԿԱՐԾԻՔ

Էլոյան Նարեկ Արայիկի «Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» ներկայացված ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Դպրոցական տարիքում շարժողական ակտիվության ապահովումը օրգանիզմի զարգացման, ֆունկցիոնալ կարողությունների բարելավման և հարմարվողականության բարձրացման կարևորագույն պայման է:

Ուստի այդ նպատակով տուրիզմը դիտարկվում է որպես դեռահասների և պատանիների շրջակա միջավայրի ու պատմական վայրերի ուսումնասիրման, ֆիզիկական պատրաստության, օրգանիզմի կոփման, ֆունկցիոնալ վիճակի բարելավման, անձի բարոյակամային և հայրենասիրական, գեղագիտական ու աշխատանքային դաստիարակության համալիր միջոց:

Ինչպես նշում են բազմաթիվ հեղինակներ, դպրոցականների տուրիստական պատրաստության մակարդակը բավարար չէ և չի համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Հանրապետության պետական կրթական փաստաթղթերում տուրիստական պատրաստությունն արտացոլված է ավագ դպրոցի ֆիզիկական դաստիարակության ծրագրերում: Սակայն դիտումները ցույց են տալիս, որ գործնականում այն լիովին չի իրականացվում, ակնհայտ են նյութատեխնիկական, կազմակերպչական բազում պատճառներ: Պատճառներից մեկն էլ այն է, որ բացակայում են գիտամեթոդական հիմնավորված մշակումներ:

Եվ այդ առումով Ն. Էլոյանի հետազոտությունը հիմնահարցի լուծման տրամաբանական գործընթացն է:

Ատենախոսության կառուցվածքը կրում է դասական ձև, բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, գործնական առաջարկություններից, ընդգրկում է 14 աղյուսակ, 25 գծապատկեր և շարադրված է համակարգչային 115 էջի վրա: Գրականության ցանկում բերված են 141 մատենագիտական սկզբնաղբյուրներ:

Առաջին գլխում հայցորդը նկարագրում է գիտամեթոդական գրականության այն շրջանակը, որը թույլ է տվել պարզաբանել հիմնախնդրի ուսումնասիրման աստիճանը, հստակեցնել աշխատանքի նպատակը, խնդիրները, օբյեկտը, նախանշել սեփական հետազոտության հիմնական ուղղությունները:

Ամփոփ ներկայացված է տուրիզմի սոցիալ-մանկավարժական նշանակությունը: Բազմաթիվ աշխատանքներում ընդգծվում է տուրիզմի բազմակողմանի

ներգործությունը դպրոցականների վրա, որը պայմանավորված է առողջարարական, կրթական, դաստիարակչական և կիրառական նշանակությամբ:

Ուստի տուրիստական պատրաստության կարևորությունը՝ որպես դպրոցականների ուսուցման և դաստիարակության համալիր միջոց, մատնանշում է նաև նրա ներգրավումը կրթական համակարգ: Դրա հետ մեկտեղ պետք է փաստել, որ առկա են մի շարք հարցեր՝ կապված հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության իրականացման հետ, որոնք արդիական են և լուծման կարիք ունեն:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը ներկայացրել է սոցիոլոգիական հարցման, սիրտանոթային համակարգի ֆինկցիոնալ վիճակի, ֆիզիկական պատրաստվածության մակարդակի հետազոտման, մանկավարժական գիտափորձի և մաթեմաթիկական վիճակագրության մեթոդները, հետազոտության կազմակերպումը և քանակակազմը, որը ներկայացվել է երեք փուլերով:

Առաջին փուլում անցկացվել են սոցիոլոգիական հարցումներ 309 ուսուցիչների, 998 դպրոցականների շրջանում, հանրապետության մարզերից և Երևան քաղաքից:

Երրորդ փուլում անցկացվել է փաստագրող մանակավարժական գիտափորձ, որի արդյունքում որոշվել է 7-9-րդ դասարանների դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը և ֆունցիոնալ վիճակը: Գիտափորձում ընդգրկվել են Երևան քաղաքի 3 դպրոցների 7-9-րդ դասարանների 145 դպրոցականներ (70 աղջիկ և 75 տղա) և Արագածոտնի մարզի 76 դպրոցականներ (36 աղջիկ և 40 տղա):

Մշակված մեթոդիկայի փորձարկման նպատակով կազմակերպվել է ձևավորող մանկավարժական գիտափորձ 3 տարիների ընթացքում:

Գիտափորձի ավարտին իրականացվել է ստացված տվյալների վիճակագրական վերլուծություն և ամփոփում:

Ատենախոսության երրորդ գլխում դպրոցականների շրջանում անցկացվել է հարցում նրանց վերաբերմունքը և գիտելիքները տուրիզմի վերաբերյալ բացահայտելու նպատակով: Աշակերտները նախապատվություն են տալիս լեռնային (50%) և հետիոտն (47%) արշավներին:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների շրջանում անցկացված սոցիոլոգիկան հարցման արդյունքում բացահայտվել է, որ ուսուցիչների 95,1%-ը հնարավոր է համարում դպրոցում տուրիստական պատրաստության կազմակերպումը:

Բացահայտվել է ուսուցիչների կարծիքը տուրիստական պատրաստության խոչընդոտող պատճառների վերաբերյալ:

Աշխատանքի չորրորդ գլխում քննարկվել են մանկավարժական գիտափորձի արդյունքները:

Եռամյա մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ փորձարարական խմբերում տղաների և աղջիկների շարժողական

պատրաստվածության ցուցանիշներն աճել են, և ըստ Ռուֆիեի ինդեքսի այն կրել է հավաստի փոփոխություններ:

Ն. Էլոյանի կողմից մշակվել է 7-9 դասարաններում սովորող աշակերտների տուրիստական պատրաստվածության մշակման մեթոդիկան և եռամյա մանկավարժական գիտափորձի ընթացքում ապացուցվել է դրա արդյունավետությունը:

Առանձնահատուկ պետք է նշել, որ աշխատանքն աչքի է ընկնում իր բաժինների և մտքի տրամաբանական հերթականությանմբ՝ ապահովելով մանկավարժական գիտափորձի տեսական և մեթոդական հիմքը:

Հեղինակը լիովին լուծել է հետազոտության առջև դրված խնդիրները, որոնք արտացոլված են եզրակացություններում:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը, և կարևորելով ստացված արդյունքների գործնական նշանակությունը, հարկ է նշել աշխատանքում տեղ գտած որոշ բացթողումներ"

1. Ցանկալի կլիներ, որ սոցիոլոգիական հարցումներում ներգրավվեին հանրապետության տարբեր մարզեր: Երևան քաղաքում և Արագածոտնի մարզում անցկացված սոցիոլոգիական հարցումների և մանկավարժական գիտափորձի արդյունքները ներկայացվեր առանձին, ըստ բնակավայրերի:
2. Գիտափորձից ստացված մասնագիտական գիտելիքները և կիրառական կարողությունները գուցե նպատակահարմար էր ներկայացնել ըստ տղաների և աղջիկների:
3. Գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ հեղինակի կողմից մշակվեր մեթոդական հանձնարարականներ ֆիզկուլտուրայի ուսուցիչների վերապատրաստման նպատակով:
4. Աշխատանքում առկա են տեխնիկակական և տպագրական աննշան թերություններ:
5. Սակայն նշված նկատառումները և որոշ վրիպումներ չեն նվազեցնում կատարված հետազոտության գիտական արժեքը և գործնական նշանակությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և նրանում լիովին արտացոլված է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էլոյան Նարեկ Արայիկի «Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և

ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկ.գիտ.դոկտոր, դոցենտ Ա.Լ. Գրիգորյան

Ա.Լ. Գրիգորյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

Հ.Ռ.Հ գիտական քարտուղար՝ Ռ. Ս. Կասաբաբովա